

“Ա Լ Ա Փ Մ Ե Տ”

փակ բաժնետիրական ընկերություն

Ֆեռոհամաձուլվածքների գործարանի

ՎՆԱՍԱԿԱՐ ՆՅՈՒԹԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ
ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ (ՍԹԱ)
ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԻ ՆԱԽԱԳԻԾ

“Ալափաթ” ՓԲԸ տնօրեն՝

Ս.Բողոզյանս

Կատարողների ցուցակ

Համակարգող՝ «Քոնսեկոարդ» ՍՊԸ տնօրեն Վ.Թևոսյան

Կատարողներ, «Քոնսեկոարդ» ՍՊԸ մասնագետներ՝

- տեխնոլոգիական գործընթացների նկարագրություն՝ Հ.Միրզոյան
- սարքավորումների բնութագրեր, հումք և արտադրանք՝ Ա.Սարաջյան
- արտանետումների հաշվարկ՝ Վ.Թևոսյան

Վնասակար նյութերի մթնոլորտում ցրման համակարգչային հաշվարկը կատարվել է ՀՀ բնապահպանության նախարարության «Շրջակա միջավայրի վրաներգործության մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից:

Անոտացիա

“Ալափմետ” ընկերությունը ՀՀ Կոտայքի մարզի Ալափարս համայնքի վարչական սահմաններում գտնվող իր արտադրական տարածքում իրականացնում է ֆեռոձուլվածքների արտադրություն:

Ֆեռոձուլվածքների արտադրությունը հիմնվել է 2013թ. և ներկայացվել բնապահպանական փորձաքննության, որի արդյունքում 14.06.2013թ. ստացվել է ՀՀ բնապահպանության նախարարության թիվ ԲՓ59 փորձաքննական եզրակացությունը:

Արտադրական շղթան ընդլայնելու նպատակով, ընկերությունը 2014 թվականին գործարանի կազմում տեղադրել է մոլիբդենի խտանյութի թրծման հոսքագիծ: Ընդլայնման նախագիծը նույնպես ներկայացվել է բնապահպանական փորձաքննության, որի արդյունքում 2014 թվականի ապրիլի 22-ին ընկերությունը ստացել է “Ֆեռոհամաձուլվածքների գործարանի ընդլայնման աշխատանքային նախագծի վերաբերյալ” ԲՓ 28 փորձաքննական եզրակացությունը:

2014 թվականի կեսից ընկերությունը իրականացրել է սարքավորումների մոնտաժում և գործարկման և կարգաբերման աշխատանքներ, սակայն առկա հումքի անհամապատասխանության պատճառով անհրաժեշտ ցուցանիշների արտադրանք չի հաջողվել ստանալ և գործարանը լիարժեքորեն չի շահագործվել:

2015 թվականին հումքը ներմուծվել է արտերկրից, սակայն արդյունքները նույնպես անբավարար էին:

2016 թվականին պայմանագրեր են կնքվել “Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ” ՓԲԸ և այլ ներքին մատակարարողների հետ և ընկերությունը սկսել է գործարկման աշխատանքները:

Ներկա հետազոտությունը և արտանետումների նորմատիվների նախագիծը մշակվել է հիմք ընդունելով “Մթնոլորտային օդի պահպանության մասին” ՀՀ օրենքը և ՀՀ կառավարության 27.12.2012թ. “Մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվների մշակման ու հաստատման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի մարտի 30-ի N 192 և 2008 թվականի օգոստոսի 21-ի N 953-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին” թիվ 1673-Ն որոշումը:

Աշխատանքում ի մի են բերվել կազմակերպության գործունեությունից առաջացող մթնոլորտն աղտոտող աղբուրների արտանետումների որակական և քանակական բնութագրերը: Ձերնարկությունում առկա են արտանետումների 9 աղբյուր:

Աշխատանքում բերված են աղտոտման աղբյուրների տեխնիկական հետազոտման արդյունքների տվյալները՝ տեքստային և աղյուսակային տեսքով:

Նշված աղբյուրներից արտանետվում են 4 տեսակի վնասակար նյութեր.

- Փոշի անօրգանական՝ 3.272 տ/տարի,
- Ծծմբի երկօքսիդ՝ 125.58 տ/տարի,
- Ազոտի երկօքսիդ՝ 0.665 տ/տարի,
- Ածխածնի մոնօքսիդ՝ 3.988 տ/տարի:

Արտանետումների ընդհանուր քանակը կազմում է 133.505 տ/տարի:

Արտանետումների հետևանքով շրջակա միջավայրին հասցվելիք վնասի մեծությունը կազմում 8468362.0 դրամ, հաշվարկը տես հավելված 2-ում:

Վնասակար գումարային ազդեցությամբ օժտված են ազոտի երկօքսիդը և ծծմբի երկօքսիդը:

ՍԹԱ նորմատիվներին հասնելու ժամկետը համարվում է հաստատման պահից:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Կատարողների ցուցակ.....	2
Անոտացիա	3
1. Ընդհանուր տեղեկություններ կազմակերպության մասին	6
2. Տնտեսավարող սուբյեկտի բնութագիրը որպես մթնոլորտային օդն աղտոտող աղբյուր.....	6
2.1. Օգտագործվող հումքը և հիմնական արտադրատեսակները	6
2.2. Տեխնոլոգիական գործընթացները.....	7
2.3. Մթնոլորտային արտանետումների աղբյուրները	13
2.4. Ջարկային արտանետումների բնութագիրը.....	15
2.5. ՍԹԱ նորմատիվների հաշվարկի համար աղտոտող նյութերի պարամետրերը	15
3. ՍԹԱ նորմատիվների/չափաքանակների հաշվարկի համար անհրաժեշտ ելակետային տվյալները	21
4. Վնասակար նյութերի արտանետումների ցրման հաշվարկը.....	21
4.1. Ցրման պայմանները որոշող օդերևութաբանական բնութագրերը և գործակիցները.....	21
4.2. Վնասակար նյութերի ցրման հաշվարկի հակիրճ արդյունքները	22
5. ՍԹԱ նորմատիվների որոշումը, արտանետումների չափաքանակների առաջարկը	22
6. Անբարենպաստ կլիմայական պայմանների ժամանակ արտանետումների կարգավորման միջոցառումներ.....	23
Հավելված 1.....	25
“ԱԼԱՓՄԵՏ” ՓԲԸ արտանետումների քանակների հաշվարկման եղանակները.....	25
Հավելված 2.....	29
Մթնոլորտի վրա գործունեության հետևանքով առաջացած տնտեսական վնասը.....	29
Հավելված 3.....	30
Վնասակար նյութերի ցրման հաշվարկի աղյուսակները	30

1. Ընդհանուր տեղեկություններ կազմակերպության մասին

“Ալափմետ” փակ բաժնետիրական ընկերությունը (ՓԲԸ) հիմնադրվել է 2003 թվականին (գրանցման համարը՝ 39.120.01556), ընկերության իրավաբանական հասցեն է՝ ՀՀ, Կոտայքի մարզ, Ալափարս, Չարենցավանի խճուղի1, փակուղի 8:

Ընկերությունը զբաղվում է ֆեռոձուլվածքների արտադրությամբ իր գործարանի տարածքում, որը գտնվում է ՀՀ Կոտայքի մարզի Ալափարսի համայնքի վարչական սահմաններում՝ նախկին հաստոցաշինական գործարանի լայն սպառման ապրանքների տեղամասում՝ Ալափարս գյուղից 2.64 կմ, իսկ Չարենցավան քաղաքից 2.22 կմ հեռավորության վրա:

Գործարանի ընդհանուր տարածքը 16000 ք.մ է, որի մեջ ներառվում է երկու արտադրական շինություն, պահեստներ, վարչական շենք, որոնք սեփականության հիմունքով պատկանում են “ԱԼԱՓՄԵՏ” ՓԲԸ՝ համաձայն ՀՀ կադաստրի պետական կոմիտեի թիվ 2848226 վկայականի՝ տրված 16.12.2011թվականին: Հողամասի նպատակային նշանակությունը, ըստ կադաստրի վկայականի՝ արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրության նշանակությամբ օբյեկտներ:

Գործարանի մոտակայքում անցնում է ավտոմայրուղի, երկաթգիծ, խմելու ջրագիծ, ոռոգման ջրանցք և կոյուղատար:

2. Տնտեսավարող սուբյեկտի բնութագիրը որպես մթնոլորտային օդի աղտոտող աղբյուր

2.1. Օգտագործվող հումքը և հիմնական արտադրատեսակները

Հիմնական հումք է հանդիսանում մոլիբդենի խտանյութը: Ծագման վայրից և հարստացման տեխնոլոգիայից կախված, մոլիբդենի խտանյութը ունի հետևյալ քիմիական բաղադրությունը:

Մոլիբդենի խտանյութի քիմիական կազմը, %

Mo	SiO ₂	As	Sn	P	Cu
45 - 52	4 - 11	0.03 – 0.07	0.02 – 0.07	0.02 – 0.05	0.4 – 2

Արտադրական գործընթացում նաև օգտագործվում են՝

- Fe₂O₃
- Fe Si (65)
- Al
- CaO (Կիր)

- Պողպատի թերթիկներ
- FeMo-ի խարամ (սեփական արտադրության երկրորդային հումք),
- Na₂CO₃
- ծծմբական թթվի լուծույթ (սեփական արտադրության երկրորդային հումք),
- NaCl:

Բնառեսուրսներից՝ ջուր և բնական գազ:

Հումքի ծախսը կախված է արտադրվող ֆեռոմոլիբդենի տեսակից (մակնիշ):

Հիմնական արտադրատեսակն է՝ ֆեռոմոլիբդենը:

Օժանդակ արտադրատեսակները՝

- պղնձի կարբոնատ,
- կալցիումի հիդրոսուլֆատ:

Օժանդակ արտադրանքի ելքը նույնպես կախված է արտադրվող ֆեռոմոլիբդենի տեսակից (մակնիշ):

2.2. Տեխնոլոգիական գործընթացները

2.2.1. Մոլիբդենի խտանյութի մաքրում հիդրոմետալուրգիական եղանակով

Մոլիբդենի խտանյութում պղնձի պարունակությունը կարող է տատանվել 0.4 – 2 տոկոսի սահմաններում: 1.5 – 2 տոկոսի պարունակության դեպքում պղինձը բացասաբար է ազդում տեխնոլոգիական գործընթացի վրա և անհրաժեշտություն է առաջանում նվազեցնել պղնձի պարունակությունը: Այդ նպատակով իրականացվում է պղնձի կորզում հիդրոմետալուրգիական եղանակով:

Թթվակայուն ռեակտորի մեջ խտանյութից լուծահանվում է պղինձը և այլ ուղեկցող մետաղները, եթե այդ մետաղների խտությունը մոլիբդենի խտանյութում գերազանցում է թույլատրելի քանակը, օգտագործելով H₂SO₄ լուծույթ:


Այդ նպատակի համար օգտագործվում է մոլիբդենի խտանյութի թրծման (բովման) արտադրամասի ջրային սկրուբերում առաջացող 6%-ոց ծծմբական թթվի լուծույթը:

Լուծահանումից հետո մոլիբդենի խտանյութի սուսպենզիան գտվում է վակուում ֆիլտրի միջոցով: Նստվածքը՝ մոլիբդենի խտանյութը, ուղարկվում է թրծման արտադրամաս՝ խառնվելով չորանոց տրվող խտանյութի հետ, իսկ լուծույթին (ջրային մնացորդ) ավելացվում է Na₂CO₃, որի միջոցով պղինձը նստեցվում է կարբոնատների ձևով, իսկ չեզոքացված լուծույթը մղվում է ջրային սկրուբեր լրացնելու համար ջրի կորուստները:

Պղնձի կարբոնատը, որը չնչին քանակներով կարող է նաև պարունակել կապարի և ցինկի կարբոնատներ, հավաքվում է պահեստային տարողության մեջ և վաճառվում պղինձ և պղինձարջասպ արտադրող կազմակերպություններին:

2.2.2. Մոլիբդենի խտանյութի թրծում (բովում) (նկար 1. Տեխնոլոգիական սխեմա)

Նկար 1. Խտանյութի վերամշակման տեխնոլոգիական սխեմա



Սարքավորումների անվանացուցակ

1. Գազային չորացուցիչ	9. Շրջանառու թթվային լուծույթի բար
2. Բովման (թրծման) վառարան	10. Շրջանառու հիմնային լուծույթի բար
3. Էլեկտրական տաքացուցիչ	11. Կաթիլորսիչ
4. Նախնական խուց	12. Օդամղիչ (օդաքարշ)
5. Արագության նվազեցման սարք	13. Խողովակի հիմք
6. Թնքային գտիչ	14. Արտանետման խողովակ
7. Ջրային սկրուբեր	
8. Հիմնային սկրուբեր	

Խտանյութը ավտոտրանսպորտային միջոցներով ստացվում է առաքիչի կողմից և պահեստավորվում արտադրամասի առանձին հատվածում /փակ շինություն/, որտեղից բարձվում է չորացուցիչի մեջ կամ տեղափոխվում հիդրոմետալուրգիայի տեղամաս:


Խտանյութը ստացվում է որոշակի խոնավությամբ: Խտանյութից խոնավությունը հեռացվում է թրծման գործընթացից առաջ՝ մինչև 250°C ջերմաստիճանում գազային խողովակ-խողովակ չորացուցիչում, որի դեպքում դեռևս չեն անջատվում ծծմբային գազեր: Թրծման գործընթացի դեպքում անհամեմատ բարձր ջերմաստիճանային պայմաններում անջատված ծծմբային գազերը կարող էին միանալ խոնավության /ջրի/ հետ և առաջացնել թթուներ, որը կարող էր քայքայել սարքավորման մետաղը, եթե խտանյութը նախապես չչորացվի:

Որպես վառելիք օգտագործվում է բնական գազը: Այլընտրանքային վառելիք չի նախատեսվում:

Չոր խտանյութը տելֆերի միջոցով տեղափոխվում է թրծման վառարան:

Խտանյութի թրծման պրոցեսը, արտադրության հիմնական մասն է և այդ արտադրամասից է տեղի ունենում աղտոտող նյութերի գերակշիռ արտանետումը մթնոլորտ: Թրծման ժամանակ առաջանում է MoO₃, որի մեջ պարունակվում է 0,05-0,15% մնացորդային ծծումբ:

Խտանյութի թրծումը կատարվում է հորիզոնական պտտվող խողովակային վառարանում: Օքսիդացման պրոցեսը տեղի է ունենում ջերմության անջատումով, համաձայն հետևյալ ռեակցիայի՝



Ռեակցիայի արդյունքում անջատված ջերմությունը թույլ է տալիս թրծման պրոցեսը իրականացնել հիմնականում անջատած ջերմության հաշվին:

Սակայն վառարանի միջնամասում 630 – 650°C ջերմաստիճանային ռեժիմը պահպանելու համար վառարանի միջնամասում տեղադրված է էլեկտրատաքացուցիչ:

Ռեակցիայի արդյունքում առաջանում են մոլիբդենի եռօքսիդ և ծծրի երկօքսիդ, որի մի մասը ($\approx 10\%$) թթվածնի ազդեցության պայմաններում ռեակցիոն միջավայրում և ռեակտորի էլքային մասում օքսիդանում է մինչև ծծմբի եռօքսիդ:

Խտանյութի թրծման ընթացքում առաջացող գազաօդային խառնուրդը, որի ջերմաստիճանը 300-350°C է, պարունակում է անօրգանական փոշի, ծծմբի երկօքսիդ և եռօքսիդ:


Վառարանից գազաօդային խառնուրդի հետ դուրս մղվող անօրգանական փոշին կազմում է բեռնավորված հումքի 6-8%-ը (միջին՝ 7%):

Վառարանից, գազաօդային խառնուրդը տեխնոլոգիական շղթայի վերջում տեղադրված ծխաքարշիջի միջոցով տրվում է գազամաքրման և գազահովացման համակարգ, որը բաղկացած է հետևյալ գործընթացներից և սարքավորումներից՝


ա. Նստեցման և հովացման սարք, որտեղ կատարվում է գազաօդային խառնուրդի արագության կտրուկ անկում, որի արդյունքում գազը հովանում, իսկ փոշին նստում է սարքի ստորին մասում գտնվող բունկերի հատակին: Նստեցման արդյունավետությունը կազմում է՝ 50 %:

Հովացման սարքից դուրս եկած գազաօդային խառնուրդի ջերմաստիճանը իջնում է մինչև 55-60°C: Նշված խառնուրդը մտնում է թևքային գտիչ (ֆիլտր)՝ որտեղ փոշին նստեցվում է 98 – 99 % արդյունավետությամբ:

բ. Փոշուց մաքրված գազաօդային խառնուրդը մտնում է ջրային սկրուբեր, որտեղ կլանվում է SO₃ գազը հետևյալ ռեակցիայով և առաջանում է ծծմբական թթվի թույլ լուծույթ՝



գ. Երկրորդ սկրուբերում օգտագործվում է կրակաթի թույլ լուծույթ և կլանում են ծծմբային անհիդրիդի 90%-ը հետևյալ ռեակցիայով՝



Յուրաքանչյուր սկրուբերում տեղի է ունենում նաև մնացորդային փոշու կլանում, ընդ որում յուրաքանչյուր սկրուբերի կլանման նվազագույն արդյունավետությունը կազմում 50%:

Մաքրված գազաօդային խառնուրդը արտանետվում է մթնոլորտ 47 մ բարձրությամբ և 800մմ տրամագծով խողովակի միջոցով:

Վառարանում ստացվող տեխնիկական MoO₃ լցվում է բունկերի մեջ, որը սայլակի միջոցով տեղափոխվում է ֆեռոմոլիբդենի արտադրամաս:


2.2.3. Ֆեռոմոլիբդենի արտադրություն

Ֆեռոմոլիբդենի արդյունաբերման հիմնական նյութ են ծառայում մոլիբդենի եռօքսիդը (MoO₃), ֆեռոսիլիցիումը (FeSi 45, FeSi 65 կամ FeSi 75), երկաթի օքսիդները, խարամը:

Քվարցային ավազը և մյուս հումքատեսակները, ենթարկվում են չորացման բնական գազով աշխատող վառարանում, ինչի հետևանքով խոնավությունը չի գերազանցում 0.2%: Այլընտրանքային վառելիք չի նախատեսվում:

Ստորև նկար 2-ում բերված է ֆեռոմոլիբդենի արտադրամասի տեխնոլոգիական սխեման:

Նկար 2. Ֆեռոմոլիբդենի արտադրամասի տեխնոլոգիական սխեմա



Տեռոմոլիբդենի արտադրամասի սարքավորումների անվանացուցակ

Համարը սխեմայի վրա	Սարքավորումների անվանումը	Քանակը
1	Չորանոց (գազային վառարան)	2
2	Գնդիկավոր աղաց	1
3	Պահեստավորման բունկերներ	4
4	Խառնիչներ	2
5	Հալման վառարաններ	3
6	Հովացման ավազան	1
7	Այտավոր գարդիչներ	2
8	Ջրային սկրուբեր	1
9	Նստեցուցիչ	1
10	Ջրային ավազան	1
11	Օդամղիչներ	2

Չորացումից հետո ելանյութը մանրացվում է գնդավոր աղացում, ինչի հետևանքով մասնիկների չափերը չեն գերազանցում 3մմ: Չորացված և մանրացված ելանյութը պահեստավորվում է հերմետիկ բունկերներում: Ելանյութի մշակման ընթացքում բեռնման, բեռնաթափման և տեղափոխման աշխատանքների արդյունքում առաջանում են անօրգանական փոշու արտանետումներ, որոնք դուրս են բերվում բնական օդափոխության խողովակի (դեֆլեկտոր) միջոցով:

Ելանյութերը, ինչպես մասն մոլիբդենի եռօքսիդը կշռվում են և բարձվում խառնիչների մեջ: Խառնիչները գործում են տատանման եղանակով:

Խառնիչների տեղամասում տեղադրված են տեղային քարշիչներ (զոնտեր), որոնք միացված են օդամղիչի հետ և փոշին արտանետվում են մթնոլորտ 8մ բարձրությամբ, 0.3մ տրամագծով խողովակի միջոցով:

Հալումը կատարվում է աղյուսապատված հալքանոթային վառարանում՝ 6մ³ ծավալով և 10տ բովախառնուրդի տարողությամբ: Ընդամենը տեղադրված են 3 վառարան, որոնցից հալման պահին աշխատում է միայն մեկը:

Բեռնումից հետո վառարան է ներանցվում բռնկիչը և վառվում: Վառարանի վրա տեղադրվում է գլխանոց, որը միացված է գտող մաքրող համակարգին: Բովախառնուրդի հալման ընթացքը լավացնելու նպատակով վառարան է մատուցվում լրացուցիչ օդ: Գազափոշային խառնուրդը օդափոխման համակարգով ուղղվում է գտող համակարգ, որտեղ անցնելով երկփուլային գտում գրեթե լրիվ (99%) ազատվում է փոշուց և 32մ բարձրության և 0.8 մ տրամագծով խողովակով դուրս է բերվում մթնոլորտ: Ջտման համակարգը իրենից ներկայացնում է գազագոծիչ, համընթաց սկրուբերի եղանակով, որտեղ ջուրը և գազը (վերնից) համընթաց շարժվում են ապարատի երկայնքով: Ապարատում կլանվում է փոշին, որը ջրային

հոսքի միջոցով հավաքվում է ավազանում, իսկ մաքրված գազը անցնում է երկրորդ ապարատը, որտեղ նստում են ջրի կաթիլները և նույնպես հոսում դեպի ավազան: Վերջնականորեն մաքրված գազաօդային խատնուրդը ծխատար խողովակով դուրս է բերվում մթնոլորտ:

Նստեցված փոշին (170-180կգ, մեկ գործընթացի ընթացքում) վերադարձվում է մշակման (չորացում և հալեցում): Ամբողջ գործընթացը տևում է 15-20րոպե, որից հետո հալեցված զանգվածը մնում է մեկ ժամով վառարանի մեջ, հետո բացում են ելանցքը, հեռացնում են խարամը, իսկ ֆեռոմոլիբդենի հալույթը ավազահորի մեջ, որտեղ նա մնում է ևս 6 ժամ: Հովանալուց հետո ֆեռոմոլիբդենի ձուլակտորը տեղափոխվում է հալման վառարանների մոտ գտնվող ջրավազանի մեջ, որտեղ հովանում է ջրային միջավայրում: Այդ ընթացքում ձուլակտորը ճաքճքում է: Ձեռքով առանձնացվում են կտորները, տեղափոխվում այտավոր ջարդիչներ և մանրացնում: Քանի որ դա արվում է խոնավ վիճակում, արտանետումներ չեն առաջանում:

Հիմնական տեխնոլոգիական արտադրամասերը գործում են անընդհատ սխեմայով, 24 ժամ/օր, հումքի լիարժեք ապահովման պայմաններում ժամային արտադրողականությունը կկազմի 300 կգ, իսկ տարեկան աշխատաժամերը՝ 8000 ժամ:

Ընտրված տեխնոլոգիական սխեման, սարքավորումները և կարգավորման համակարգը հիմնված են ժամանակակից լավագույն փորձի վրա և ձեռնարկությունը մոտ տարիներին չի նախատեսում կատարել փոփոխություններ: Իսկ հումքային բազայի սակավությունը թույլ չի տալիս նախատեսել արտադրողականության ավելացում:

2.3. Մթնոլորտային արտանետումների աղբյուրները

Ընկերությունում մթնոլորտային արտանետումների աղբյուր են հանդիսանում տարբեր տեխնոլոգիական հանգույցների սարքավորումները և գործընթացները:

Սխեմային վրա արտանետման աղբյուրները նշանակված են “Ա” տառով: Արտանետումների քանակները հաշվարկվել են հաշվեկշռային եղանակով: Հաշվարկները բերված են հավելվածների մասում:

2.3.1. Հիդրոմետալուրգիայի տեղամաս

Ա.1 փոշու արտանետման չկազմակերպված աղբյուր:

Հիդրոմետալուրգիայի տեղամասը գտնվում է թիվ 1 արտադրական մասնաշենքին կից բացօդյա հարթակում:

Արտանետումները առաջանում են խտանյութը պարկերից լուծահանման ռեակտորի մեջ լցնելուց: Հաշվի առնելով, որ ծծմբական թթուն տրվում է 6 տոկոսանոց լուծույթի ձևով, իսկ լուծահարված խտանյութը տեղափոխվում է խոնավ ձևով, այլ արտանետումներ այս հանգույցում չեն հաշվարկվել:

2.3.2. Խտանյութի թրծման արտադրամաս

Խտանյութի չորացման վառարանում բնական գազի այրման արգասիքները արտանետվում են 11 մ բարձրությամբ և 0.15 մ տրամագծով Ա.2 ծխնելույզից:

Խտանյութը ընդունելու, չորացուցիչ բեռնելու, այնտեղից թրծման վառարան բեռնելու և բեռնաթափելու ընթացքում առաջանում են անօրգանական փոշու արտանետումներ, որոնք մթնոլորտ են տրվում շինության առաստաղում տեղադրված Ա.3 դեֆլեկտորով:

Խտանյութի թրծման վառարանում առաջացած գազաօդային խառնուրդը մաքրվելով փոշեկլանիչ և գազամաքրման համակարգում արտանետվում է Ա.4 արտանետման աղբյուրից՝ 47 մ բարձրությամբ և 0.8 մ տրամագծով:

2.3.3. Ֆեռոմոլիբդենի պատրաստման արտադրամաս

Հումքատեսակների գնդիկավոր աղացների աշխատանքի ընթացքում առաջացող փոշին մթնոլորտ է տրվում բնական քարշի Ա.5 խողովակով (դեֆլեկտոր):

Հումքատեսակների չորացման վառարանում բնական գազի այրման արգասիքները արտանետվում են 7.5 մ բարձրությամբ և 0.3 մ տրամագծով Ա.6 ծխնելույզից:

Հումքատեսակների խառնիչների աշխատանքի ընթացքում առաջացող փոշին տեղային օդաքարշ համակարգով մղվում է դեպի Ա.7 խողովակ:

Հալման վառարանների գազաօդային խառնուրդը մաքրվելով ջրային կլանիչներում արտանետվում է Ա.8 արտանետման աղբյուրից՝ 32 մ բարձրությամբ և 0.8 մ տրամագծով:

Սանիտարապաշտպանիչ գոտի

Համաձայն CH 245 – 71 Սանիտարական դասակարգման, Արդյունաբերական Ձեռնարկությունների ֆեռոմոլիբդենի (մետաղական համաձուլվածքների) արտադրությունները պետք է ունենան մինչև 500 մ չափերի սանիտարապաշտպանիչ գոտիներ, ինչը հաշվի առնելով մերձակայքում բնակելի տների բացակայությունը, այս պարագայում լիովին ապահովված է:

Տեխնոլոգիական սարքավորումների քանակը, արտանետման աղբյուրների պարամետրերը, վնասակար նյութերի արտանետումների քանակը և տեսակը բերված են աղյուսակ 1-ում:

ԱՂՅՈՒՍԱԿ 1.

Մթնոլորտ արտանետվող աղտոտող նյութերի անվանացանկը

Նյութի անվանումը	ՄԹԿ միանգամյա առավելագույն, մգ/մ ³	Նյութի արտանետումը, տ/տարի
1	2	3
Փոշի անօրգանական (SiO ₂ ՝ < 20%)	0.5	3.272

Ծծմբի երկօքսիդ (SO ₂)	0.5	125.58
Ածխածնի մոնօքսիդ	5.0	3.988
Ազոտի երկօքսիդ	0.2	0.665

Գումարման հատկությամբ օժտված են ազոտի երկօքսիդը և ծծմբի երկօքսիդը:

2.4. Ձարկային արտանետումների բնութագիրը

ԱՂՅՈՒՍԱԿ 2.

Ձարկային արտանետումներ ունեցող աղբյուրների թվարկումը և բնութագիրը

Արտադրամասի (տեղամասի) և աղբյուրների անվանումները	Նյութի անվանումը	Նյութի զարկային արտանետումը, գ/զարկ,	Արտանետման պարբերականությունը, (անգամ/ տարի)	Արտանետման տևողությունը, վրկ	Ձարկային արտանետումների տարեկան քանակությունը, տ
1	2	3	4	5	6
Խտանյութի թրծման վառարան	SO ₂	5818	1 ¹	120	0.006
	SO ₃	970		120	0.001

Ֆեռոմոլիբդենի արտադրության վթարների տեսակետից վտանգավոր հանգույցներ են չորացուցիչները, թրծման և հալման վառարանները:

Չորացուցիչներում վթարի դեպքում անմիջապես անջատվում է բնական գազի մատակարարումը և զարկային արտանետում չի առաջանում:

Հալման վառարանի յուրաքանչյուր գործառույթը տևում է 15 – 20 րոպե և վթարի հավանականությունը չնչին է:

Ձարկային արտանետում տեսականորեն հնարավոր է միայն խտանյութի թրծման տեղամասում: Վթարի դեպքում ավտոմատ հատիչը փակում է վառարանի էլքային մասը, սակայն խողովակում պարունակվող ծծմբի երկօքսիդը և եռօքսիդը առանց մաքրվելու կարտանետվեն դեպի մթնոլորտ եթե հոսանքազրկվեն պոմպերը և դադարի ջրի շրջանառությունը:

Եթե ընդունենք վթարի առավելագույն հնարավոր տևողությունը, որի ընթացքում հատիչը կփակի վառարանի էլքը՝ 2 րոպե, իսկ թրծման վառարանը այդ պահին բեռնված լինի առավելագույն՝ 300 կգ խտանյութով, ապա զարկային արտանետումները կկազմեն՝

- ծծմբի երկօքսիդ՝ 5818 գ,

- ծծմբի եռօքսիդ՝ 970 գ:

2.5. ՄԹԱ նորմատիվների հաշվարկի համար աղտոտող նյութերի պարամետրերը

ՄԹԱ նորմատիվների/չափաքանակների հաշվարկի համար մթնոլորտ արտանետվող աղտոտող նյութերի պարամետրերը ներկայացվում են աղյուսակ 3-ի տեսքով: Ընդ որում, հաշվի են առնված մթնոլորտ աղտոտող նյութերի ինչպես կազմակերպված, այնպես էլ չկազմակերպված աղբյուրները:

¹ Նկարագրված վթարային իրավիճակի հավանականությունը չնչին է, համենայնդեպս 2014 թվականից իվեր, երբ սկսվել են ֆեռոմոլիբդենի արտադրության փորձարկումները և փորձնական քանակների արտադրությունը որևէ վթար չի արձանագրվել:

**ԱՂՅՈՒՍԱԿ 3.
ՍԹԱ ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԻ ՀԱՄԱՐ ԱՂՏՈՏՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ՊԱՐԱՄԵՏՐԵՐԸ**

Արտադրություն արտադրամաս	Աղտոտող նյութերի առաջացման աղբյուրները		Աշխատաժամե- րի տարեկան քանակը		Արտանետման աղբյուրի անվանումը		Աղբյուրների քանակը		Աղբյուրի կարգաթիվը			
											անվանումը	
	ՆՎ	Հ	ՆՎ	Հ	ՆՎ	Հ	ՆՎ	Հ	ՆՎ	Հ		
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
Հիդրոմետալուր- գիայի տեղամաս	Լուծահանիչի բունկեր, խտանյութի պարկերի բեռնաթափում		2	2	8000	8000	հարթակ		1	1	1	1
Խտանյութի արտադրամաս	Չորացուցիչ (վառարան)		1	1	8000	8000	խողովակ		1	1	2	2
Խտանյութի արտադրամաս	Խտանյութի բեռնում և բեռնաթափում		1	1	8000	8000	խողովակ (դեֆլեկտոր)		1	1	3	3
Խտանյութի արտադրամաս	Խտանյութի թրծման վառարան		1	2	8000	8000	խողովակ		1	1	4	4
Ֆեռոմոլիբդենի արտադրամաս	Հումքանյութերի մանրացում գնդիկավոր աղացում		2	2	8000	8000	Խողովակ (դեֆլեկտոր)		1	1	5	5
Ֆեռոմոլիբդենի արտադրամաս	Հումքանյութերի չորացում վառարանում		1	1	520	520	խողովակ		1	1	6	6
Ֆեռոմոլիբդենի արտադրամաս	Հումքատեսակների խառնիչ		2	2	2670	2670	խողովակ		1	1	7	7
Ֆեռոմոլիբդենի արտադրամաս	Հալման վառարան		3	3	1050	1050	խողովակ		1	1	8	8

3-րդ աղյուսակի շարունակությունը


Աղբյուրի կարգաթիվը	Աղբյուրի բարձրությունը, մ		Աղբյուրի տրամագիծը, մ		Գագաօդային խառնուրդի պարամետրերն արտանետման աղբյուրի ելքում						Կոորդինատները քարտեզ-սխեմայում, մ			
					արագությունը, մ/վրկ		ծավալը, մ ³ /վրկ		Ջերմաստիճանը, °C		կետային աղբյուրների խմբի կենտրոնի կամ գծային աղբ. 1-ին ծայրի		գծային աղբյուրի 2-րդ ծայրի	
	ՆՎ	Հ	ՆՎ	Հ	ՆՎ	Հ	ՆՎ	Հ	ՆՎ	Հ	X ₁	Y ₁	X ₂	Y ₂
	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25	26
1	4.0	4.0	6.0	6.0	2.0	2.0	56.5	56.5	17.0	17.0	208	184	214	184
2	11.0	11.0	0.15	0.15	6.0	6.0	0.11	0.11	150.0	150.0	180	219	-	-
3	8.2	8.2	0.6	0.6	3.0	3.0	0.85	0.85	20.0	20.0	195	216	-	-
4	47.0	47.0	0.8	0.8	12.0	12.0	6.0	6.0	25.0	25.0	172	232	-	-
5	8.2	8.2	0.6	0.6	3.0	3.0	0.85	0.85	20.0	20.0	165	132	-	-
6	7.5	7.5	0.3	0.3	6.0	6.0	0.42	0.42	140.0	140.0	168	123	-	-
7	5.0	5.0	0.45	0.45	9.6	9.6	1.53	1.53	20.0	20.0	140	129	-	-
8	32.0	32.0	0.8	0.8	12.0	12.0	6.0	6.0	25.0	25.0	96	108	-	-

3-րդ աղյուսակի շարունակությունը

Աղբյուրի կարգաթիվը	Գազամաքրման սարքերի անվանումը	Մաքրման ենթակա նյութերը/ Ապահովվածության գործակիցը, %	Մաքրման միջին աստիճանը/ Մաքրման առավելագույն չափը, %	Նյութի անվանումը	Աղտոտող նյութերի արտանետումները						ՍԹԱ հասնելու տարին
					ՆՎ			Հ (ՍԹԱ)			
					գ/վրկ	մգ/մ ³	տ/տարի	գ/վրկ	մգ/մ ³	տ/տարի	
	27	28	29	30	31	32	33	34	35	36	37
1	-	-	-	փոշի անօրգանական	0.028	0.5	0.8	0.028	0.5	0.8	2016
2	-	-	-	- ազոտի երկօքսիդ - ածխածնի մոնօքսիդ	0.022 0.129	207.5 1216.6	0.62 3.72	0.022 0.129	207.5 1216.6	0.62 3.72	2016 2016
3	-	-	-	փոշի անօրգանական	0.017	20.0	0.48	0.017	20.0	0.48	2016
4	1. Կլանիչ 2. Թևքային գտիչ 3. Ջրային սկրուբեր 4. Հիմնային սկրուբեր	Փոշի՝ 100 SO ₂ ՝ 100	1. Փոշի՝ 50/70 2. Փոշի՝ 98/99 3. Փոշի 50/50 3. SO ₃ ՝ 99/99 3. SO ₂ ՝ 1/1 4. Փոշի՝ 50/50 4. SO ₃ ՝ 100 4. SO ₂ ՝ 90/95	- փոշի անօրգանական - ծծմբի երկօքսիդ	0.0125 4.368	2.07 724.1	0.36 125.58	0.0125 4.368	2.07 724.1	0.36 125.58	2016 2016
5	-	-	-	փոշի անօրգանական	0.004	4.72	0.114	0.004	4.72	0.114	2016
6	-	-	-	- ազոտի երկօքսիդ - ածխածնի մոնօքսիդ	0.024 0.143	56.6 337.2	0.045 0.268	0.024 0.143	56.6 337.2	0.045 0.268	2016
7	-	-	-	փոշի անօրգանական	0.01	6.55	0.096	0.01	6.55	0.096	2016
8	Ջրային սկրուբեր	Փոշի՝ 100	Փոշի՝ 99/99	փոշի անօրգանական	0.375	62.2	1.422	0.375	62.2	1.422	2016


որտեղ՝
ՆՎ՝ ներկա վիճակ, Հ՝ հեռանկար

“ԱԼԱՓՄԵՏ” ՓԲԸ տեղանքի իրավիճակային քարտեզ



Վնասակար նյութերի արտանետման աղբյուրների իրադրային սխեմա

ՀԱՏԱԿԱԳԻԾ Մ 1:1000



3. ՄԹԱ նորմատիվների/չափաքանակների հաշվարկի համար անհրաժեշտ ելակետային տվյալները

Կատարվել է մթնոլորտն աղտոտող նյութերի աղբյուրների գույքագրում: Ըստ գույքագրման արդյունքի ՄԹԱ հաշվարկի ելակետային տվյալները կազմվել և հաշվարկվել են: Նշված ցուցանիշները բերված են աղյուսակում 3-ում:

Արտանետվող նյութերի քանակների հաշվարկները կատարվել են տեխնոլոգիական ռեգլամենտի և նյութական հաշվեկշռի հիման վրա:

“Նստեցման անչափելի գործակիցն ընդունվել է գազային նյութերի և մանր դիսպերսության փոշու համար, որոնց նստեցման կարգավորված արագությունը չի գերազանցում 3-5 սմ/վրկ` 1, խոշոր դիսպերսության փոշու համար մաքրման բացակայության դեպքում` 3, մաքրման դեպքում` 2:

4. Վնասակար նյութերի արտանետումների ցրման հաշվարկը

4.1. Ցրման պայմանները որոշող օդերևութաբանական բնութագրերը և գործակիցները

Ցրման պայմանները որոշող օդերևութաբանական բնութագրերը և գործակիցները

ներկայացված են ստորև բերված աղյուսակում, ըստ ՀՀ օդերևութաբանական ծառայության պաշտոնական տվյալների (կցվում է): Սահմանային թույլատրելի առավելագույն միանվագ կոնցենտրացիաները վերցված են ՀՀ կառավարության 2006թ. փետրվարի 2-ի N160-Ն որոշմամբ հաստատված ցանկից:

ԱՂՅՈՒՍԱԿ 4.

Օդերևութաբանական բնութագիրը և գործակիցները, որոնք բնորոշում են բնակելի տարածքի մթնոլորտում վնասակար նյութերի ցրման պայմանները:

Հ/հ	Բնութագրերի անվանումը	Մեծությունը
1.	Մթնոլորտի շերտադասավորությունից կախված գործակիցը, A	200
2.	Տեղանքի ռելիեֆի գործակիցը	1.0
3.	Տարվա ամենաշոգ ամսվա առավելագույն միջին ջերմաստիճանը, T °C	17.8
4.	Միջին տարեկան «քամիների վարդը» %-ով	
	Հյուսիս	2
	Հյուսիս- Արևելք	25
	Արևելք	18
	Հարավ-Արևելք	5
	Հարավ	6

	Հարավ-Արևմուտք	36
	Արևմուտք	4
	Հյուսիս-Արևմուտք	1
6.	Քամու արագությունը (բազմամյա տվյալների միջինը), որի կրկնելիության գերազանցումը կազմում է 5%, մ/վրկ	7

4.2. Վնասակար նյութերի ցրման հաշվարկի հակիրճ արդյունքները

Վնասակար նյութերի արտանետումների ցրման հաշվարկը, կատարվել է ՀՀ բնապահպանության նախարարության “Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն” ՊՈԱԿ կողմից՝ “Ռադուգա” համակարգչային ծրագրի հիման վրա:

Հաշվարկների արդյունքները աղյուսակների տեսքով բերված են հավելվածների մասում: Ինչպես երևում է հաշվարկների արդյունքներից արտանետումներում առկա բոլոր նյութերի գետնամերձ կոնցենտրացիաները գտնվում են բնակավայրերի համար սահմանված ՄԹԿ սահմաններում, հաշվի առած նաև գումարման հատկությունները և ֆոնային աղտոտվածության մակարդակը:

5. ՄԹԱ նորմատիվների որոշումը, արտանետումների չափաքանակների առաջարկը

Մթնոլորտում վնասակար նյութերի արտանետումների ցրման հաշվարկի արդյունքները ներկա վիճակի և հեռանկարի համար ցույց են տալիս, որ սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների գերազանցում չի դիտվում ոչ մի նյութի համար, այդ իսկ պատճառով վնասակար նյութերի համար սահմանված նորմատիվները առաջարկվում է ընդունել որպես ՄԹԱ:

Քանի որ արտանետումները չեն գերազանցում վնասակար նյութերի համար սահմանված չափանիշները, այդ պատճառով արտանետումների քանակն իջեցնող միջոցառումների պլան չի նախատեսվում և աղյուսակ 5-ը չի լրացվում:

ԱՂՅՈՒՍԱԿ 5.

ՄԹԱ նորմատիվներ հասնելու միջոցառումների ծրագիր

NN Ը/Կ	Միջոցառման անվանումը և աղտոտման աղբյուրի համարը	Իրակա-նացման ժամկետը	Վնասակար նյութի (նյութեր) արտանետումը մինչև միջոցառումը		Վնասակար նյութի (նյութեր) արտանետումը միջոցառումն իրականացնելուց հետո	
			գ/վրկ	տ/տարի	գ/վրկ	տ/տարի

Հաշվարկների վերլուծության հիման վրա առաջարկվում է բոլոր նյութերի համար նախատեսված արտանետումները ընդունել որպես սահմանային թույլատրելի (տես աղյուսակ 6):

Ֆոնային աղտոտվածության տվյալները հաշվարկվել են ըստ մոտակա՝ Ալափարս բնակավայրի բնակչության քանակի:

**ԱՆՇԱՐԺ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ ԱՂՏՈՏՈՂ ՆՅՈՒԹԵՐ ՄԹՆՈԼՈՐՏ ԱՐՏԱՆԵՏԵԼՈՒ
“ԱԼԱՓՄԵՏ” ՓԲԸ ՉԱՓԱՔԱՆԱԿՆԵՐԸ ԱՐՏԱՆԵՏՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱՄԱՐ**

Աղտոտող նյութը	Ընդհանուր արտանետումը	
	գ/վրկ	տ/տարի
Փոշի անօրգանական (SiO_2 ՝ < 20%)	0.4465	3.272
Ծծմբի երկօքսիդ	4.368	125.58
Ազոտի երկօքսիդ	0.046	0.665
Ածխածնի մոնօքսիդ	0.272	3.988

**6. Անբարենպաստ կլիմայական պայմանների ժամանակ
արտանետումների կարգավորման միջոցառումներ**

Անբարենպաստ եղանակի դեպքում արտանետումների կարգավորման միջոցառումները կրում են կազմակերպչական-տեխնիկական բնույթ և գործնականորեն ընդգրկում են վնասակար նյութերի արտանետումների բոլոր աղբյուրները.

1. թույլ չտալ սարքավորման գերբեռնված աշխատանք,
2. խստորեն հետևել տեխնոլոգիայի ընթացակարգին,
3. չբեռնավորել և չդատարկել լուծիչներ և հեշտ բոցավառվող բոնկվող նյութեր,
4. վնասակար նյութերի արտանետումների քանակի մեծացման դեպքում հարկ է անմիջապես դանդաղեցնել կամ ժամանակավորապես դադարեցնել տվյալ սարքավորման աշխատանքը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. “ГОСТ 212-76”. Концентрат молибденовый. ТУ.
2. “Մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգ” հաստատված ՀՀ Կառավարության 2005թ. հունվարի 25-ի N 91 – Ն Որոշմամբ
3. Сборник методик по расчету выбросов в атмосферу загрязняющих веществ различными производствами. Госкомгидромет, Ленинград, 1986
4. “ВРЕМЕННОЕ МЕТОДИЧЕСКОЕ ПОСОБИЕ ПО РАСЧЕТУ ВЫБРОСОВ ОТ НЕОРГАНИЗОВАННЫХ ИСТОЧНИКОВ В ПРОМЫШЛЕННОСТИ СТРОИТЕЛЬНЫХ МАТЕРИАЛОВ”, Минпромстрой СССР, 1987
5. “ПРОИЗВОДСТВО ФЕРРОСПЛАВОВ”. ООО «Металл», 2007
6. “ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴՆ ԱՂՏՈՏՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՈՒ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 1999 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 30-Ի N 192 ԵՎ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 21-Ի N 953-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ” ՀՀ կառավարության
7. ՀՀ կառավարության 2006թ.փետրվարի 2-ի N160-Ն որոշմամբ հաստատված վնասակար նյութերի սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների ցանկ

Հավելված 1

“ԱԼԱՓՄԵՏ” ՓԲԸ արտանետումների քանակների հաշվարկման եղանակները

Ա. Հիդրոմետալուրգիայի տեղամաս

Արտանետումները առաջանում են խտանյութի ընդունման և բեռնման ընթացքում: Ըստ խտանյութի տարբեր խմբաքանակների բաղադրության վերլուծության, ամբողջ քանակի մեկ երրորդ մասը պարունակում է 1.5 – 2 % պղինձ և ենթակա է լուծահարման:

Խտանյութի լուծահարվող քանակը՝ $2400 \text{ տ} : 3 = 800 \text{ տ/տարի}$:

Համաձայն տեխնոլոգիական ռեգլամենտի այս պրոցեսում խտանյութի կարուստը առավելագույնը կկազմի 0.2%, այստեղից առավելագույն արտանետումը կկազմի՝ $800 \text{ տ} \times 0.002 \times 0.5 = 0.8 \text{ տ/տարի}$, որտեղ 0.5՝ գրավիտացիայի գործոնը հաշվի առնող գործակից է (4, աղ.3):

Բ. Խտանյութի չորացման տեղամաս

Խտանյութի չորացումը կատարվում է գազային չորացուցիչում՝ խողովակը խողովակի մեջ: Չորացուցիչի կառուցվածքը այնպիսին է, որ բացառվում է գազի այրման արգասիքների շփումը չորացող խտանյութի հետ: Բնական գազի ծախսը՝ 120 մ^3 1 տ խտանյութի հաշվարկով: Հաշվի առնելով, որ խտանյութի մշակման առավելագույն արտադրողականությունը կազմում է 0.3 տ/ժամ, գազի ծախսը կկազմի՝ $0.3 \times 120 = 36 \text{ մ}^3 / \text{ժամ}$ կամ $28800 \text{ մ}^3 / \text{տարի}$:

Բնական գազի այրման արդյունքում առաջանում են ածխածնի մոնօքսիդի և ազոտի օքսիդների արտանետումներ: Արտանետումների քանակները հաշվարկվել են ըստ գազի մեկ մ³ այրման տեսակարար գործակիցների (3, աղ.3.13)՝

- ածխածնի մոնօքսիդ՝ $12.9 \text{ գ/մ}^3 \times 36 \text{ մ}^3 = 464.4 \text{ գ/ժամ}$ կամ 0.129 գ/լրկ և 3.72 տ/տարի ,

- ազոտի օքսիդներ (ազոտի երկօքսիդի հաշվարկով)՝ $2.15 \text{ գ/մ}^3 \times 36 \text{ մ}^3 = 77.4 \text{ գ/ժամ}$ կամ 0.022 գ/լրկ և 0.62 տ/տարի :

Գ. Խտանյութի բեռնման և բեռնաթափման գործընթացները

Խտանյութը ստացվում է պարկերով, այն պարկերից դատարկվում է չորացման վառարանի մեջ, որից փոքր տարողություններով (бадья) տեղափոխվում է թրծման վառարանի բունկեր: Թրծումից հետո ստացված մոլիբդենի եռօքսիդը նույնանման տարողություններով տեղափոխվում է ֆեռոմոլիբդենի արտադրամաս: Համաձայն տեխնոլոգիական ռեգլամենտի այս պրոցեսում խտանյութի կարուստը նույնպես կկազմի 0.2%, այստեղից անօրգանական փոշու առավելագույն արտանետումը կկազմի՝

$2400 \text{ տ} \times 0.002 \times (1 - 0.9) = 0.48 \text{ տ/տարի}$, որտեղ 0.9՝ գրավիտացիայի գործոնը հաշվի առնող գործակից է (4, աղ.3, փակ շինությունների համար):

Դ. Խտանյութի թրծման հանգույց

Խտանյութի թրծման ընթացքում առաջացող գազաօդային խառնուրդը պարունակում է անօրգանական փոշի, ծծմբի եռօքսիդ և ծծմբային անհիդրիդ: Թրծման ժամանակ խտանյութի 6–8 % դուրս է բերվում գազաօդային խառնուրդի հետ: Թրծման գործընթացում մոլիբդենի սուլֆիդի օքսիդացման արդյունքում առաջանում է մոլիբդենի եռօքսիդ և ծծմբային անհիդրիդ, վերջինս դուրս է բերվում գազաօդային խառնուրդի միջոցով:

Թրծումը կատարվում է էլեկտրական էներգիայով տաքացման և ռեակցիայի ջերմության միջոցով:

Վառարանից գազաօդային խառնուրդը մղվում է դեպի գազամաքրման հանգույց, որը բաղկացած է հետևյալ սարքավորումներից.

- Փոշու նստեցման և հովացման խուց 0 % արդյունավետությամբ (փոշու նստեցում);
- թևքային գտիչ 98 % արդյունավետությամբ (փոշու կլանում);
- ջրային սկրուբեր, որտեղ գազաօդային խառնուրդը լվացվում է շրջանառու ջրային հոսքով, ապահովելով ծծմբական անհիդրիդի կլանման 99 %, ծծմբային անհիդրիդի 1% և թևքային գտիչներից անցած փոշու կլանման 50 % արդյունավետություն;
- հիմնային սկրուբեր, որտեղ գազաօդային խառնուրդը լվացվում է կրակաթի թույլ լուծույթով, ապահովելով ծծմբային անհիդրիդի կլանման 90 %, իսկ ծծմբական անհիդրիդը գործնականում ամբողջությամբ, և ջրային սկրուբերից անցած փոշու կլանման 50 % արդյունավետություն:

Մաքրված գազաօդային խառնուրդը արտանետվում է մթնոլորտ՝ 47մ բարձրությամբ և 0.8 մ տրամագծով ծխնելույզի միջոցով:

Թրծման գործընթացից հետո մոլիբդենի խտանյութի մեջ մնում է ծծմբի պարունակության 0.1 տոկոսը: Կարելի է հաշվարկել ծծմբի քանակությունը, որը անջատվում է խտանյութի թրծման արդյունքում՝ հաճվի առնելով, որ չթրծված խտանյութում մետաղական մոլիբդենի մասնաբաժինը 48.5 տոկոս է /485կգ/տ/, իսկ 96 միավոր մետաղական մոլիբդենին մոլիբդենի դիսուլֆիդի մեջ կապված է 64 միավոր էլեմենտար ծծումբ: $64կգ \times 485կգ/տ : 96 կգ \times 0.999 = 323 կգ/տ$

Թրծման ընթացքում ծծմբի 10%-ը վերածվում է ծծմբի եռօքսիդի (SO₃), իսկ մնացած 90%՝ ծծմբի երկօքսիդ (SO₂) անհիդրիդի: Այս սովորյալներով կարել է հաշվարկել առաջացող ծծմբական գազերի քանակությունները /K_{SO3} և K_{SO2}/, որոնք առաջանում են 1տ մոլիբդենի խտանյութի թրծումից.

$$K_{SO_3} = 323կգ/տ \times 0.1 : 2.5 = 80.75կգ/տ$$

$$K_{SO_2} = 323կգ/տ \times 0.9 : 2.0 = 581.4կգ/տ,$$

Որտեղ 2.5 և 2.0 ծծմբի ծանգվածային տոկոսային պարունակությունն է ծծմբի երկօքսիդում և ծծմբի եռօքսիդում համապատասխանաբար:

Հաշվի առնելով տարեկան պլանային արտադրողականությունը քանակները կարող են կազմել`

$$K_{SO_3}/\text{տարի} = 80.75 \text{ կգ/տ} \times 2400 \text{տ/տարի} = 193.8 \text{ տ/տարի},$$

$$K_{SO_2}/\text{տարի} = 581.4 \text{ կգ/տ} \times 2400 \text{տ/տարի} = 1395.36 \text{ տ/տարի}:$$

Ջրային և հիմնային սկրուբերների արդյունավետությունը կազմում են համապատասխանաբար`

- ծծմբի եռօքսիդի համար` 98 և 100%,
- ծծմբի երկօքսիդի համար` 1 և 90%:

Այստեղից ծծմբի երկօքսիդի վերջնական արտանետումները կկազմեն`

